ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

15.11.2011թ.
ք.Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 93-ը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Ս. Հովհաննիսյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, առողջապահական հիմնարկների տնօրեններ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Մարզի բնակչության բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման մասին:
/Զեկ.՝ առողջապահության և սոց. ապահովության վարչության պետ Գ. Ավետիսյան/

2. Համայնքներում վարչական վերահսկողություն իրականացնող աշխատանքային խմբի գործունեության մասին հաշվետվություն:
/Զեկ.՝ ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայան/

3. Մարզի համայնքների 2011 թ. 10 ամսվա բյուջեների կատարման մասին:
/Զեկ.՝ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյան/

4. Քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության և ՀՀ Կառավարության 2011 թվականի Փետրվարի 3-ի № 108-Ն որոշմամբ Արարատի մարզին հատկացված միջոցների հաշվին իրականացված աշխատանքների մասին:
/Զեկ.՝ քաղաքաշինության վարչության պետ Ռ. Մկրտչյան/

5. Բերքահավաքի, մթերման աշխատանքների ամփոփման և աշնանացանի վերաբերյալ:
/Զեկ.՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տ. Վիրաբյան/

1. **Լսեցին՝**
Մարզի բնակչության բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման մասին առողջապահության և սոց-ապահովության վարչության պետ Գ. Ավետիսյանի զեկուցումը: /կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Է. Բարսեղյանը:

2. **Լսեցին՝**
Համայքներում վարչական վերահսկողություն իրականացնող աշխատանքային խմբի գործունեության մասին ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայանի զեկուցումը: /կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝ Սուրենավան համայքի ղեկավար Կ. Կարապետյանին տասնօրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն հողազավթումով ապօրինի շինարարության դադարեցման վերաբերյալ:

3. **Լսեցին՝**
Մարզի համայնքների 2011թ. 10 ամսվա բյուջեների կատարման մասին ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

Արտահայտվեց՝ մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանին՝ մարզի քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարներին 3-օրյա ժամանակահատվածում ներկայացնել տեղական տուրքերի մասով հավաքագրում չիրականացրած համայնքների ցուցակները:

Մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանին՝

- ճշտել դուրս գրված ավտոմեքենաների խոտանման մասին գույքահարկի բազան և 10-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

Իրավաբանական բաժնի պետ Վ. Գրիգորյանին՝

- 3 շաբաթվա ընթացքում ճշտել և ներկայացնել տեղեկատվություն Ռանչպար համայնքնում "Մաշտոց" սեփականաշնորհված հողի վերաբերյա:լ

4. **Լսեցին՝**

Քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի № 108-Ն որոշմամբ Արարատի մարզին հատկացված միջոցների հաշվին իրականացված աշխատանքների քաղաքաշինության վարչության պետ Ռ. Մկրտչյանի զեկուցումը: /կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝ քաղաքաշինության վարչության պետ Ռ. Մկրտչյանին՝

- հաճախակի ուսումնասիրել և ուշադրություն դարձնել շինարարությունների որակին:

5. **Լսեցին՝**

Բերքահավաքի, մթերման աշխատանքների ամփոփման և աշնանացանի վերաբերյալ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տ.Վիրաբյանի զեկուցումը: /կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տ.Վիրաբյանին՝

- ներկայացնել տեղեկատվություն մարզի ջերմոցային տնտեսությունների, սառնարանների և ձկնաբուծարանների քանակի վերաբերյալ:
- այն համայնքներում, որտեղ չեն հավաքագրվել եգիպտացորենի և ցորենի գումարները, մինչև դեկտեմբերի 25-ը հավաքագրել:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Է. Բարսեղյանը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ